



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99  
F - 12



2160

W 2100

№ 2. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՃԱՆՆԵՍ ԴԱԿԹԵԱՆԻ № 2.

ՍԻՄ. ԲՈԲԻԵՑՆ

# ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ



391.99

F-1

Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՀԻՇ  
ԳՈՒՇԿԱՆՆԵՐՆ ՏՊԱՐԱՆ  
1904

Ա. Վահագին

01 JAN 2009

16 DEC 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՑՄԱՆ ԴԱՒՅՈՒՆՆԵՐ

199

5 - 13

ՍԻՄ. ԲԱՐԻԵՐԱՆ



# ԲԱՆԱՍՏԵՂԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

505



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՅՈՒՆ  
1904

12.11.2013

22856

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

Ա. Բ Մ Ե Ա Ն Ս Կ Ը

(Սօնէտ)

Մեղմացաւ արդէն ճողիցը փչող ցերեկուայ  
քամին,

Միայն մի-երկու հողմաղացների թևեր են  
շարժվում.

Թալթար ու խուրբէտ, բարձրը երգելով,  
իրիկնաժամին

Փռշոտ փողոցով գէպի հողաշէն տներն են  
ուղղվում:

Մօտիկ ճամփիկ մինարեի վրայ երեաց մօլլան  
եւ օդը յանկարծ լցուեց եատսուի կլկոց-  
ներով.

Դրան անյապաղ նոյնպիսի թախծոս ձայներ  
միացան.

Զերծեռանդ մարդիկ մեջիս են գնում շատապ  
բայլերով...

Մութը տարածուեց, բայց արևելքից ահա  
հանդարախիկ  
Սահեց լուսնկան և արժաթ շողեր ցիր ու ցան  
արեց:

Խեղդուկ տներից փողոց զուրս եկան խոնչա-  
ցած մարդիկ:

Դաշտից՝ կալ հսկող թաթարի սրնդի ձայնը  
դագարեց  
Եւ վերջին անդամ հանեց հողմաղացն լնդհա-  
տուած ճռինչ...

Արուսիկների սուլումից ի զատ լոեց ամեն  
ինչ:

## Բ Ո Ւ Ք Բ Ը

(Սօնէտ)

Սառած ծովի և ծիւնազատ դաշտի վրայ  
Սանձարձակ բուքն իր մահաշունչ խաղն էր  
սարքել.  
Ծառնոցն իսպառ լցուած փափուկ ծիւնով, նրա  
Սուլու ու վայրադ օրօրերգով քուն էր մտել:

Այնքան էր ցուրտ, որ պարզնկայ չինչ եթերում  
Աւելի վառ չեին կարող շողալ աստղեր.  
Թւում էր ինձ, որ ծածկը ուղիներում  
Սողուն քամին շաղ էր տրել սառցի բոցեր:

Զորս կողմը ծիւն, անվերջ սառ ծիւն, էլ ոչ  
մի բան.

Հէնց ահաւոր մահն էր կարծես փոել նրան  
Եւ ինքն ուրախ ու վայրախինդ պար էր  
դալիս:

Եւ՝ պարզորոշ, թանձը օդով լող էր տալիւ  
Ծովի կողմից երբեմնակի սառցի ճայթոց,  
Եւ հողմն անդուսպ, խօլ ֆշացնում իբր  
ահեղ օծ...

Թէ տապն է կիզում, թէ ծութ իբրև ծուխ  
լողում է խաղաղ,  
Թէ մարախ թռչում, թէ դեաւուրն ալրում  
զիւղ, շէն ու աւան,  
Խուլ ու համը ես դու, ո՞հ դժնահայեաց բարձր  
Զատրդաղ:

## Չ Ա. Տ Ր Դ Ա. Ղ Լ

(Միջկեհցի «Խրիմի սօնէտներից»)

Ես դողդողալով համբոյր եմ տալիս ամուրքիդ  
հետքին,

Մեծդ Զատրդաղ, Եալայի կարող, հսկայա-  
զօր խան.

Ո՞հ, Խրիմի կայմ, Երկրի մինարէ: Խորունկ  
եթերքին

Հասել ես զլիսով և աստղերի մօտ որոշել  
սահման:

Ահեղ՝ Եղեմի դռները հսկող Գաբրիէլի նման,  
Մենակ, անսասան կանգնած ես դու միշտ Երկ-  
նի դռան տակ:

Թիկնոցդ է անտառն, իսկ հիւսուած չալմաղ—  
ամպերն սպիտակ,  
Եւ շանթն իր փալով սիրուն նկարներ գոր-  
ծում է վրան:

Անալալ թարգման համաշխարհային ըստեղ-  
ծաղործման,  
Որոտմունք, չըեր, երկիր և ազգեր ոտքիդ տակ  
փռած  
Լոկ այն ես լսում, ինչ որ բնութեան ասում  
է Աստուած:

# ՊԵՐԵԿՈՂԻ ՊԱՐԱՆՈՑԻ ՎՐԱՅ

(Սօնէտ)

Միջօրէի տապից կիզուած դժգոյն երկնում  
Մի ամպ չը կայ: Խայտանամուկ ու բծաւոր  
Մողէսն ու իմն արևի տակ սահուն սլում,  
Կամ թէ անշարժ՝ չոր, տապախարշ—հրա-  
տոչոր

Օդն են շնչում քնքշանալով: Լճու է, հան-  
դարու...  
Ահա այնտեղ՝ նեղ շուաքում, մանառի տակ  
Չդուեց թաթարն. ուղտերն իր մօտ, վէս ու  
հպարտ,  
Որոճալով, շուրջն են նախում անճպատակ:

Արեւլքում մօտիկ է ծովն. այն ափերից  
Հովիկն իր հետ բերում է մերթ նեխուածքի  
հոտ:  
Բայց դէպի ծախ աչք ածելով՝ ես եթերից

Ծովը չոկել չեմ կարենում: Ափերի մօտ,  
Այնտեղ՝ հեռուում երգում է նա, ծփանք տալիս,  
Եւ վեհ, աղատ, յետ ու առաջ գնում-գալիս:

# ՊԵՐԵԿՈՂԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

(Սօնէտ)

Անշէն, լայնարձակ ու անծալրածիր դաշտով  
եմ անցնում...

Լուսնկայ զիշեր՝ վեհ, գեղատեսիլ, անդորր  
ու խաղաղ.

Սրուսիկների ճռուոցն է միայն ականչիս հաս-  
նում—

Անբաժան ճռուոց՝ անձեկին, անդուլ և միա-  
պաղաղ:

Ահա առաջիս աղի ծովակի շրերն են խաղում.  
Ի՞նչ՝ հրաշաղեղ տեսարան է այն ներքեռում  
փռուած.

«Կլոր» լիճն է ալդ. անշուր տեղերից աղն է  
պապում...

Անցնում եմ նրան: Բայց ահա դարձեալ մի  
լիճ երեաց:

Անցնում եմ կարգով «Կարմիր», «Կիստեան»  
 լճերի մօտով,  
 Բլրից մօտենում վէս, արձաթաշաղ «Կեր-  
 լեռուտ» լճին...  
 Սահման... է՛լ հեռուն—դաշտեր, սիվաշներ՝  
 ծծումբի հոտով...

Ո՞հ, սիրուն լճեր: Այս լայնածաւալ դաշտերի  
 միջին,  
 Պայծառ օրերին կամ դիշերներին դուք էք,  
 դուք մենակ,

Որ ուղերիս սթափուել էք տալիս դէժ առ  
 ժամանակ...

---

ԾՆՆԴԵԱՆ ՀՈՅԱԼ

(Սօնէտ)

Լոյսը շողաց Բէթլէնեմի մռայլ այրից,  
 Որ մարդկութեան անլոյս սրտից մութը վանէ.  
 Լոյսը շողաց, որ յաւիտեանս յաւիտենից  
 Վեհ աւանդներ մարդկանց սրտում վառ պահ-  
 պանէ:

Եւ դարերի խիտ խաւարում շողշողալով,  
 Այժմ էլ է նա լոյս տեսիլ հեզ, մեղմիկ փալլով,  
 Որ յիշեցնէ միշտ հոգսազբաղ արարածին  
 Անկարողի, տապակուղի ստրուկի մասին:

Հոգէվառ լոյս. ճշմարտութիւն, հաւատ և սէր  
 նա է ծնել այն անմռուց վսեմ գիշեր.  
 Հստոյդ կեանքի հիմք—լոյսն է նա, որ միշտ  
 անձար

Պիտի շողայ անկման հակուած մարդու համար  
 իբր ուղեցոյց, որից սակայն շատերն արդէն  
 իրանց դէմքերն անդզուշութեամբ դարձրել  
 են դէն:

չ է թ ն է ի թ

Որտե՞ղ պիտ' գտնեմ, ով օտարական,  
իմ ոսկորներին հանդիսաւ գերեզման.  
Հռենոսի սիրուն կակղիի՞ տակին,  
Արմաւենու տակ կիզող հարաւին.

Խուլ անապատում արդեօք հեռաւոր  
Օտարի ձեռքով պիտ' հանդչեմ անդորր.  
Արդեօք ծովի մօտ՝ աւազանի միջին  
Անդարթ պիտ' քնէ իմ անշունչ մարմին:

Է՞ն, ի՞նչ եմ ասում: Զէ՞ որ միշտ, յաւէտ  
Տիրոչ երկինքը կը լինի ինձ հետ,  
Եւ զլխիս վերև ասաղեր անհամար,  
Ինչպէս կերոններ՝ կը վառուեն պայծառ:

Ա Մ Պ Ե Ր

Եթերում հանդարտիկ ամպեր են լողում՝  
Իրանց չուն ուղղակի դէպի հիւսիս բռնաժ  
Եւ ասես՝ ալէծուփ ովկեանի հեռուում  
Ջուր են լուռ ընկղմում խորշակից կիզուած:  
  
Արևից տաքացած ծովից՝ աննշմար  
Դէպի վեր ամբառնում, բարդգում են ամպեր  
Եւ չըւում դէպ հեռուի փիրուզէ կամար,  
Զգելով վէտ ալեաց սահուն ստուերներ...

Փ Ո Թ Ո Ւ Ի Կ

Փոթորկած ծովին նայում էի ես.  
Դաժան ալիքներն՝ ահեղ, փրփրադէղ,  
Որոտ—շառաչով ժայռն էին կոծում,  
Կոծում մոլեզին, ցիր—յան փշրվում:

Մռնչում էր ծովն ամեհի ծայնով,  
Եռում և փրփրում լեռ ալիքներով.  
Քամին հեծելով ոռնում էր ուժգին  
Եւ մռայլ մշուշ պատում էր ծովին:

Սևագնած երկինքն անթիւ շանթերով  
Եւ հսկայ տարերքն իր խօլ ջրերով  
Իրար միացած կոյւ էին սարքել  
Վճռած՝ կամ մէկին կամ միւսին մեռնել:

Եւ այս համասվիւռ յուղմունքի ժամին  
Միայն վիթխարի, վէս լեռներ էին,  
Որ առաջուայ արէս հանդիսաւ, անխռով  
Զբաղուած էին իրանց մաքերով...

ՍԵՒ ԾՈՎԻ Ա.ՓԻՆ

Պառկած եմ ախուր ԱԼ. ծովի ափին՝  
Աւազի վրայ և նայում հեռուն,  
Դէպի այն կողմը, ուր հոգնած արփին  
Մօս է հասնելու ալիքին խաղուն:

Թեթև, շովաշունչ քամի է փչում  
Եւ մեղմիկ շոյում երեսը ծովի.  
Անհոգ ալիքներ դալիս են, գնում  
Եւ խաղում վերջին շողքովն արեի...

Արեր մտաւ... Քամին դադարեց...  
Մթնեց... Ծովն արգէն նիրհում է անդորր...  
Տանշուած հոգիս էլ թմբեց, խաղաղուեց,  
Այս լոռութեան մէջ՝ վեհ, խորհրդաւոր...

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Մեր արնակոլով դաշտերը թողինք,  
Ցիր ու ցան եղանք օտար աշխարհում.  
Սևով ծածկուեց ձեր պայծառ երկինք,  
Սևը ծանրացաւ և ձեր սրաւերում:

Մեր բալաներին զուլում արեցին  
Մեր իսկ տան միջին, մեր աչքի առաջ,  
Մեր օղուշաղներ եսիր տարեցին,  
Մեր գիւղեր դարձրին դամբարան անխաչ:

Օտարութեան մէջ, հեռու վաթանից,  
Մեր կեանքը ճնշող, ծանր է մեղ համար:  
Ա-խ, ե՞րբ պիտ' տեսնենք արդեօք մենք նորից  
Մեր վշտառոչոր մալբենի աշխարհ...



ՇԱԲԼ ԲՈԴԼԵՐԻՑ

Ի՞նչ է ձեզ երկինքն ապադայ յաւերժ չար-  
չարանքներով,

Ի՞նչ է ձեզ վճիռն երկրի խստամբեր, ուղիղ  
օրէնքի.

Խիղճ, ճշմարտութիւն—պարագ հնչիւններ կո-  
չում էք ծաղրով,

Զեղ համար փառքի փայփայող հայեացքն ան-  
պէտք է իսկի:

Ո՞հ, քայլեցէք դուք, անկումի ճամբով քայլե-  
ցէք առջև,

Ներքեւ, էլ ներքեւ իշէք գեհենի բաց երախն  
անկիշտ,

Ուր ո՞ղջ յանձտնքներն անմար կրակի փոթոր-  
կի ներքեւ,

Անկարգութեան մէջ, օձի շշիւնով, եռ եռ գա-  
լիս միշտ:

Աճապարեցէք, ո՞հ թշուառ զոհեր, վազեցէք  
արադ,  
Զեր առողջութիւն, ձեր խելքն ու պատիւ  
զուր շռայլեցէք:  
Անսանձ հեշտասէր ձեր յնորմունքներն առահ  
են, անյադ,  
Եւ վայելչութեան անդունդի տակին դուք  
քէն կը դանէք:

ԾՈՎՆ ԱՇՈՒԽՆՔԻՆ

Արագընթայ  
Ու վայրագնաց  
Ամպեր երկնին տիրացան.  
Անզուսպ քամին  
Շնչեց ուժգին,  
Մահերդ երգեց լալածայն:

Իսկ ծովն անդուլ,  
Յասկոտ և խուլ  
Կոփւն է մզում գարաւոր,  
Կոծում եղերք,  
Երգում օրհներդ,  
Միշտ սիզապանձ, փառաւոր:

## ԱՆՓՈՅԹ ՃԱՄԲՈՐԴԻՆԵՐԸ

Նայի՛ր և ցնցուի՛ր ահեղ դրամակից.  
Տեսնում ես՝ այնտեղ, ահռելի ծովում,—  
Որ գժոխք է դառել ծմբան ցուրտ հողմից,—  
Այն նաւի վրայ ինչ է կատարվում:

Շատ է ցուրտ... Նաւին սառոցը է պատում.  
Կարո՞ղ է արգեօք նա եղերք հասնել.  
Վրան տննջմար սև մահն է պտտում,  
Ուզելով նրան անդունդը տանել:

Հէ՛ նաւաստիներ, ոյժերից ընկած,  
Ճիգ են հա՛ թափում նաւը փրկելու.  
Ո՞հ, նրանք դիտեն և չունեն կասկած,  
Որ յոյս կայ, յոյս կայ մահից փախչելու:

Սակայն ճամբորդներն այդ կռւին անմաս,  
Անփոլթ, զինէհար կատակ են անում  
Եւ չեն մտածում, ի՞նչ դաժան օրհաս  
Սպասում է իրանց անկիշտ ովկեանում...

## ՄԱՆՈՒԿ ՀՈՎԻԻԼ

Վաղ առաւօտեան, դեռ լուսածաղին,  
Դէպի դաշտ քշեց նա ոչխարներին.  
Նստեց գետնի վրայ, սկսեց սրնգել  
Եւ նրա ձայնը հեռուն տարածել:

Բնութեան որդին սիրում է արօտ,  
Կանաչ գաշտավալը և երկինքն աստղոտ:  
Դաշտի թարմ օդը՝ շնչով կենսական,  
Լցնում է նրա կուրծքը մանկական:

Իսկ երբ սև ամպեղ երկինքն են պատռում,  
Ահեղ զոռումով կայծակն է ճայթում—  
Ականչ է դնում նա մռայլ դէմքով,  
Որ ընտելանալ նրան էլ հոգուով:

## ՀԵՌԱԿՈՐ ՄՏԵՐԻՄՆԵՐԻՄ

Օտար կողմում երբեմնակի  
Նստած տխուր, միայնիկ  
Դէպ' ձեղ եմ ես, ձեղ ուղղակի  
Յուշով թռչում, սիրելիք:

Այս անհամբոյր օտար տեղում  
Չը կայ բերկրանք ինձ համար,  
Սառ ծանօթներ սիրտս են նեղում.  
Մենակ եմ միշտ ու թափառ:

Եւ անձկութեան խօլ ժամերիս,  
Կարօտակէղ, թախծալիք,  
Չեղ եմ իսկոյն ես ձայն տալիս.  
Լսում էք ինձ, սիրելիք:



ԲՈԴԵՆՇՑԵԳԻՑ

Մի ժամանակ ես ուղեցի  
Փարթամ պսակ քեղ հիւսել  
Եւ ժաղիկներ որոնեցի,  
Բայց դեռ գարուն չէր եկել:

Տիմա նըանք, որ կողմ նայեմ,  
Ամենուրեք անքանակ,  
Սակայն որի՞ն ես զարդարեմ  
Դու պառկած ես հողի տակ:

\* \*

Ինչու ես դարձեալ խռովում հոգիս...  
Ո՞չ մի հարցնիր ինձ, թէ ինչու համար  
Թշուառ ու թափառ հէզ եղբայրներիս  
Դարդ ու ցաւերից չեմ երգում իսպառ:

Ա՞խ, ինչպէս երգեմ. եթէ ուզէի  
Սրտումս եղածն երգել ծայրէ ծայր,  
Ո՞րտեղից խօսքեր պիտի դանէի,  
Ու երգս լսողն ամեն ինչ զգար:

Շատերն են զգայուն լարերով երգել,  
Շատերի աչքից իւլել արցունքներ.  
Բայց գիտցիր՝ ոչ ոք չէ կարողացել  
Ասել այն ամենն, ինչ սրտում ուներ...

Ել մի՛ հարցնիր ինձ, թէ ինչու համար  
Թշուառ ու թափառ հէզ եղբայրներիս  
Դարդ ու ցաւերից չեմ երգում իսպառ.  
Այդ ցաւն անեղերը ովկեան է, հոգիս:

Ե Լ Ե Գ Ի Ա.

Օրը մութ, մոայլ և մշուշային,  
Անձրև է գալիս, ցեխն աւելանում,  
Եւ ձիւն է յանկարծ յաջորդում թօնին,  
Բայց ցեխը նրան իսկոյն կլանում,

Ծածկում է աչքիցս... Անցնում են ժամեր  
Եւ տեսնում ես մի ուրիշ պատկեր.  
Երկինքը դարձեալ անարև, ամպած,  
Իսկ գետնի վրայ բնքուշ ծիւն փուռած:

Այդ մշուշային, մոայլ օրուայ պէս  
Ցաւատանց հոգիս միշտ մութ է, անլոյս,  
Եւ իմ թախծապատ սրտում, իսկապէս,  
Չէ փայլել շողուն, յարատել մի յոյս:

Ո՛, սիրտ իմ, տոկա՛ և մի՛ վհատիր.  
Զէ՞ մառախլապատ օրերից յետոյ  
Գարուն է գալիս, նորոգվում երկիր՝  
Պայծառ, կենսատու արեի ներքոյ:

Հ Ե Յ Ն Ե Ւ Ց

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԱՍԻՄ

ՄԵԾ ՄԱՍԻՄ ՊԱՐԵՐ ԱՆԴՈՒՆ  
ԻՐ ՊԱԼԱԿԻ ՄՕՍ ԿԱՆԳՆԱԺ՝  
ԱՅՔՐ ՆՐԱՆԻՋ ՀԵՌԱՋՆՈՒԺ՝  
ՄԻՉՄ ՆԱԽՈՒԺ Է ԵՐԿԻւՂԱԺ:

ՆԱՄ Է ՍԻՐՈՒԺ ՆԱ ՓՈՔՐԻԿԻՆ.—  
Ո՞Վ Է ՍԻՐՈՒԺ ՆՐԱ ԱՐԵՍ.  
ԱՀԱ, ՆԱՅԻՐ հայր—հսկալին,—  
ՆԱ միշտ այլպէս է, այլպէս...

Եւ դաշտ, և անտառ կանաչ են հագնում,  
Ուրախ, խնդագին երգում թռչնակներ,  
Եւ անհուն քնքշանք շնչում է օդում...  
Շուտով կը հասնեն գարնան պարզ օրեր:

Գարնան հետ ահա ես էլ գարթեցի  
Եւ թօթափեցի իմ գամանութիւնն.  
Թռչնոյ երգերով ողեռուեցի,  
Երգում եմ տխուր երգասացութիւն:

Ինձ կարեկցութեամբ հարցնուժ է սարեակ.  
«Ինչու է քո երգն անխինդ, վշտալից»:  
Վաղուց է արգէն, ո՞հ աղատ թռչնակ,  
Այդ երգը ծնուել անբաղդութիւնից:

Քանի՛ տարիներ հնչեցրել է այն  
Դաշտեր, ծառաստան, անտառ ու պարտէղ...  
Քո տատն էլ, սարեակ, լսել է նրան,  
Միթէ չը զիտես...

ՉՈՐՍ ԲՆԿԵՐ ԷՀՆՔ...

ՄԱՅԻՍԻ ԳԻՇԵՐԻՆ

Հօրիզոնից երկինք սահեց  
Պարզ լուսին.

Թերուեց թմրած առուի վրայ  
Ուսենին:

Շուրջս խաղաղ շուրջս անդորր  
Ու լոիկ,

Միան երեմն շշնչում էր  
Մեղմ հովիկ:

Մնչիկ նստած անուշաբոյր  
Պարտիզում

Մինչ ուշ գիշեր ականչ դրի  
Անկշտում

Ուց բնութիւնն երկնքի հետ  
Ներդաշնակ

Երգեց սիրոլ խորհրդաւոր  
Մի նուագ:

---

Չորս ընկեր էինք մակոյկի միջին:  
Դիշեր էր չորս կողմն՝ ահոելի զիշեր.  
Մենք լողում էինք մեր երկար ուղին  
Չը խընալելով պատանի ոյժեր:

Սակայն ընկերներս, կէս ճանապարհին,  
Մոլոր պէս յանկարծ կանգ առան,  
«Ո՞ւր է փարոսը»—նրանք հարց տուին,—  
«Ինչու մինչև այժմ չենք տեսնում նրան»:

«Ել չենք կամենում մենք շարունակել  
Այս աննպատակ կոյւն անհաւասար.  
Վճռել ենք մօտիկ եղերքին հասնել  
Եւ մի ճար դտնել այնտեղ մեղ համար»:

Եւ շուրջ մտան... իսկ ես անխռով  
Շարունակեցի իմ բռնած ուղին.  
Փարոսն երկաց, և նրա լոյսով  
Ես սար կոխեցի բաղձալի ափին...

---

\* \* \*

«Մարսավելի չեն հային տառապանք՝  
Միայն չը հատներ խըղճուկի ցոցոք»:  
Գաճապահ-Բաթիկոպ:

\* \* \*

Ինչու երգիչը արդէն չէ երգում,  
Ի՞նչն է պատճառը, որ յանկարծ լոեց:  
Արդեօք խորին վիշտ ունի նա սրառմ,  
Կեանքի աղմուկի՞ց արդեօք նա զգուեց...

Ո՞չ. մի՛ մտածէք: Մըրկից առաջ էլ  
Լոռութիւն է տիրում կարճ ժամանակով:  
Երգիչը դարձեալ կը սկսէ երգել,  
Մեղ կը սթափեցնէ կրակոտ երգերով:

Աշուղ, դու աղգիդ «միշտ յուսա՛» ասիր,  
«Թէկուզ տակն ու վրայ լինի ողջ աշխարհ»,  
Եւ ինքզ ց'մահ յոյսդ չը կորցրեր,  
Բայց մեր սև օրին լաւ որ չը հասար:

Ո՞հ, ի՞նչ կը լինէր, եթէ մեր օրում  
Տեսնէիր եղօրդ այսպէս բունաւե՞ր,  
Սնարգուած, թափառ այս ու այն երկրում,  
Կորցրած տուն ու տեղ, կին ու զաւակներ:

Դու կը տեսնէիր աշխարհը սառած,  
Ծովերն՝ արիւնոտ, երկինքը՝ խաւար,  
Եւ այս պատկերի հանդէպ, կարկամած,  
Լայց կը լինէիր դու սրտապատառ:

## ԱԱԼԳԻՐԻ ԱՓին

Այս առաւօտ զետի ափին  
Ես ճեմեցի մխայնիկ,  
Մովդ - կապոյտից գարնան արփին  
Ցոլք էր թափում խաղաղիկ:

Սակաւաչուր զետն առաջիս  
Հոսում էր հեղ կարկաչով  
Եւ զով քամին պաչ էր տալիս  
Մանր ալիքին գդուելով:

Իսկ լուսափայլ, պարզ ու յստակ  
Կապուտակի անհունում  
Մի թափանցիկ և սպիտակ  
Ամպ էր դանդաղ հալ ընկնում:

Եւ այն հալուող ամպի նման,  
Իմ նորոգուած սրաի մէջ՝  
Հանգչում էր մեղմ ու լոելեայն  
Իմ վիշտն իսպառ, մինչ 'ի վերչ:

Կ Ա. Ռ Ե Կ Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Մ. Դուբինսկուց)

Տանչուած սոսկալի ցաւերով մահուած,  
Շուշանը, զետի ափին խոնարհուած,  
Ջրի մէջ տեսաւ մի ուրիշ շուշան՝  
Մահուածն սոսկալի ցաւերով տանչուած:

Պայցառ մայիսի ծաղիկը չքնաղ  
Կորացաւ զէպի խեղճ ընկերուհին,  
Էր ճիւղը հասցրեց շրերին խաղաղ  
Եւ լուռ նայում էր նրա երեսին:

Եւ խըսովայոյզ վերչին տագնապում՝  
Մահուածից առաջ, խեղճը չը զիտէր,  
Որ իր պատկերն էր շրի մէջ տեսնում,  
Որ այն մէռնողը հէնց նա ինքըն էր:

Ա. Բ Ե Խ Ա. Ծ Ա. Գ

ՈՒՂԵՑՈՅՑՑՆԵՐԻՆ

Տատասկոտ, դժուարանց ուղին թողնելով,  
Զուր են, զուր ընթանում շատերն ուրիշով.  
Եւ ափսոս այն մարդուն, որին չէ յայտնի,  
Ինչպիսի վայելքներ նեղ ճամբան ունի:

Երանի, երանի այն սակաւ մարդկանց,  
Որոնք նեղ, մտաթող ուղին են բռնած.  
Երանի գործունեայ ուղեցուցներին—  
Մշակներ, զինուորներ պատրաստողներին:

Թանձր մառախուղն արևագալին  
Զգալի կերպով փարատուել սկսեց.  
Ա. Ճպերը զլխիս վերև նեղքուեցին  
Եւ պարզ երկնքի մի մասն երևեց:

Պլպլան ասազերն իրար ետևից  
Աստիճանաբար մարեցին, հանգան,  
Եւ նսեմ շողեր թափում է վերից  
Այժմ մեն - մենակ գունատ լուսնկան:

Դաշտից զովասուն հովիկ է փչում  
Եւ ձեղմ օրօրում սաղարթ ու ժաղիկ.  
Լճակի ափին, փարթամ պարտիզում,  
Սոխակն է երդում ուրախ դաշլիկ:

Երկնի պերոզակն անրիծ գեղութեամբ  
Փալում է հիմտ պարզ, ծիծաղերես,  
Եւ պայծառ արփին վես շքեղութեամբ  
Ծագում է մնջիկ մի մեծ գնդի պէս:

Յաւէրժութեան ովկեանում սուլուեց հին  
տարին,  
Սուլուեց ինչպէս նախկիններն՝ անդարձ,  
յաւիտեան,  
իր ետևից թողնելով ողջ չարն ու բարին՝  
Անհաւասար բաժանուած դժբաղդ մարդկու-  
թեան:

Լող է տալիս իմ հոգին հին չարիքների  
Փոթորկածուփ մութ ծովում զիմաղիր ոյժով  
Եւ, համասվիւռ բերկրանքից անշատ ու հեռի,  
Դիտում նսեմ ապագան լի բուռն աշխոյժով:  
  
Թեթևաօլիկ ու նանիր հրճուելն ի՞նչ օգուտ,  
Մինչ նորն է հին, հինը՝ նոր յաւէտ, անփոփոխ:  
Թող ժամանակն ընծայէ մարդկութեան սէր,  
գութ,  
Թող խափանուեն սրտերից նենդութիւն ու ոխ,

Այնժամ միայն «Նոր տարին հասաւ» կը  
ձայնեմ  
Եւ ողջոյնի սկահակից զինին կում կ'անեմ:

Նրանց դէմ ցեխոտ ուղի էր փռուած  
Եւ շուրջը ճահիճ՝ դժուարանց ու խոր.  
Կեղտով անցնելու չէին ստեղծուած  
Նազելի կոյսի ոտիկներն անզօր:

Սակայն պատանին հսկան անվեհեր,  
Պարթև էր հուժկու, կատարեալ մի Բէլ.  
Քայլում էր վստահ. և կոյսն աներեր  
Թոյլ տուեց նրան իրա գիրկն առնել:

Եւ առաջ անցան... Սակայն ով զարմանք.  
Ի՞նչն էր, որ գերեց սիրտը պատանու:  
Այն ևս արգեօք չէր լոկ մի պատրանք,  
Որ չերմ հպուեցին շրթերն իրարու:

«Ոհ, ի՞նչու... ի՞նչու...» կըկնեց պատանին,  
Կոյսի մեղկ շնչով իսպառ համակուած,  
Եւ ուժեղ կուներն իսկոյն թուլացան.

Ամուր ոտքերը ծալուել սկսեցին,  
Եւ, օրհասական սարսափով լցուած,  
Նրանք միասին ցեխի մէջ ընկան...

Ա. Ղ Օ Թ Ք

Քեզ եմ աղերսում, ամենակալ Տէր,  
Որ տալիս ես կեանք, լոյս պայծառ և սէր.  
Տուր իմ մեղքերին, ով Տէր, թողութիւն,  
Վշտի ժամանակ՝ մխիթարութիւն:

Իմ ապաստանը Քեզ մօտ է, ով Տէր,  
Այստեղ ձաշում են ինձ անվերջ ցաւեր:  
Ո՞վ իմ Արարիչ, փրկիր ցաւերից.  
Տէր, աղերսում եմ Քեզ արտասուալից:

Մ Ա Հ

Այս աշխարհում մահն է մենակ  
Կայուն, մշտական.  
Ազգերի կեանքն՝ առժամանակ  
Ու անցողական:

Ոնց ալիբներն ովկեանում  
Խփփում են իրար,  
Անդուլ կուով ափ են վազում  
Եւ մոլեգնաբար

Եղերքներին զարնուելով՝  
Փրփուր են դառնում  
Եւ չըի հետ խառնուելով  
Խոպառ չքանում,

Նոյնպէս ամեն մի աղդ մահի  
Աղին պիտ' բռնէ,  
Աղեաների պիտ' պատահի,  
Իրը՝ ամբողչ—մեռնէ:

Մարդը՝ չնչին մասնիկն աղգի,  
ի ճնէ թշուառ,  
Մինչ՝ երբ դաւեր պիտի սարքի  
իր սլէսի համար:

Չէ՞ աշխարհում մահն է մենակ  
կայուն, յարատե.  
Պիտի խաւարի և վառ լուսնակ,  
եւ պայծառ արև:

Ո՞վ դու Տիրոջ չնչին, զժուժ  
Դժբաղդ արարած,  
Դէ՞հ, դարարիր չար զործելուց—  
Մահն է քո դիմաց:

### ԽՐԻՄԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Լող է աալիս լուսնկան աստղի ովկեանում  
եւ ալեաց հետ շողերով խաղեր է անում.  
Իսկ ծառնոցի վիթխարի նոճերը հանդարտ  
Ափին ժփող ալիքին նայում են անթարթ:

Ո՞հ, յարաւի լուսնկալ գեղանի գիշեր.  
Ես քեզ նման լուսառաս զիշեր չեմ տեսել:  
Դու յարուցիր անցեալիս քաղցրալի յուշեր,  
Եւ չորս կողմից, ուր լուսինն իր շողբն է լցել,  
Արծաթ շողբով ողողել ծով, լեռ ու ծմակ,  
Տեսնում եմ ես ոլորուող ցնորք ու շուաք...

Լաւ է այստեղ՝ ծովափին, նոճիների քով.  
Խաղուն ծովին նայելով ցնորում եմ ես  
եւ անմեկին երկիրներ ոլանում մտքով,  
Ուր սէր կայ, սէր անսահման այս վեհ ծովի  
պէս...

Ն Ո Ւ Ե Ր

ուսուցչիս՝ Եր. Շ. Ին:

Հ Ե Յ Ն Ե Ւ Ց

Թէ ինչպէս անդութ վարուեց ինձ հետ նա,  
Ես թողլ չը տուի, որ մարդ իմանալ,  
Սակայն ելալ ծով և ծալրէ ի ծալր  
Պատմեցի ծկանց՝ ինչ սրառւմս կար:

Ես բարի անուն թողեցի նրան  
Ալժմ միմիայն ցամաքի վրան,  
Բայց բնութիւնը նրա անպատճառ  
Յայտնի է ամբողջ ովկեանին անծալր...

Ես վաղուց շուրջըս գորշ մշուշ եմ աեսնում,  
Տողեմաշ մառախուղ, որին թափանցել  
Նոյն իսկ սուր հայեացըով չեմ կարողանում,  
Որ, սակայն, դեռ երբէք ոյժ չէ ունեցել  
Խլացնել մինչև իսկ մի նուազ թառանչ,  
Դուրս թռած իմ քամրազդ եղբօր բերանից.  
Եւ իբրև վիթխարի զանգակի զօղանչ,  
Մի հզօր ծայն է միշտ առաջնորդել ինձ  
Թանձրամած, լուսարդել խաւարի միշով,  
Զէ թողել հնագանգուել կեանքի հաճովքին.  
«...Իդէան սիրեցէք ողջ էութիւնով,  
Նրա հետ ընթացէք...» կոչին անսալով,  
Ես մի օր կը համեմ սուրբ նպատակին:

Կ Ա Զ Ա Յ Ի Հ Ո Վ Տ Ի Ց

1. Մարտի սկզբին:

Ժպտում է արփին յստակ կամարից  
Մարտի սառ, խոնաւ օղը տաքացնում,  
Դաշտը սևանում, զրկվում ձիւնից,  
Նոճերն օրէցօր զրւարթ թարմանում:

Երբեմն նրանց մէջ քմահաճ քամին  
Երգեր է երգում՝ կամաց, մօնօտոն.  
Ուրախ են նրանք իրիկնաժամին  
Արեին ժամբում դէպի հօրիզոն:

Եւ վերջալուսի կիսախաւարում  
Դաշտն օրօրելով ախորժ, քչքչան  
Եւ կայտառ ձայնով, շրերն է զլորում  
Լեռնային գետակն՝ շտապող կաչան:

Դեռ նոր է զարթում բնութիւնն այստեղ,  
Բայց շուրջդ նայիր, տես՝ ի՞նչ պէլզամներ,  
Խոկ լուսնի լուսով որբան են շքեղ  
Եւ նոճ, և վտակ, և նիրհող սարեր:

Քիչ ես կ'անցնի, գարունը կը գալ,  
Կը զուգէ հովտին վառ ծաղիկներով  
Եւ ամենուրեք, որտեղ մի թուփ կալ,  
0ղը կը լթուի գալայլիկներով:

Այնժամ ես ալզից մինչեւ երեկոյ,  
Ունկնդիր բնութեան հոգեզուարթ հիմնին,  
Այստեղ, ստուերախիտ ծառերի ներքոյ  
Լայն հանգիստ կը տամ իմ հոգնած մարմնին:

Կ Ա. Զ Ա. Յ Ի Հ Ո Վ Տ Ի Ց

2. Գարնան առաւեօտ:

Բարձր եմ կանգնած հովարի վրայ. Բայց ինձանից բարձր են թռչում  
Կռուշների երամները:  
Սքանչելի և անսման  
Պատկերներ են իմ դէմ բացվում.  
Ե՛լ հրաշալի տեսարաններ  
Կռուշներն են վերից տեսնում,  
Եւ համրացած սքանչելիքից,  
Կորցրած խօսքի կապակցութիւնն  
Կռուցով են յայտնում իրանց  
Հիացումը, սքանչացումը:  
Իմ լեզուն էլ ասես կապ է:  
Այն ի՞նչ չքնաղ տեսարան է...  
Տես. կապուտակ պարզ կամարում  
Բորբոքվում է արեգակը:  
Օդը տաք է: Թող քո հողին  
Չը վրդովուի, որ ողջ եալլան \*)  
Դեռ ծածկուած է արծաթ ձիւնով  
Եւ արեկ հետ է խաղում:  
Այն պսպղուն ճերմակի տակ  
Թրապառում է մասաղ դարունն,

Որն իշխում է արդէն հովառում:  
Թող չը խաբուն քո աչքերը,  
Երբ որ տեսնես, որ այս անվերջ  
Պարտէզն էլ է սպիտակել.  
Այն ձիւն չէ, ոչ այն գարունն է  
Ծերուկ ծմբան վրայ խնդում.  
«Կը ճերմակցնեմ, բայց չեմ մեռնի.  
Նոր կեանք կը տամ»։ ահա ինչ է  
Ասում նրան աշխոյժ գարունն,  
Եւ նրա մեղմ քրքչոցին  
Միանում է թեթևաօլիկ  
Վճիտ կաչան, որն իր խաղուն  
Ալիքներում կոտրատում է  
Եւ ծռմռում տփին բսնող  
Բարձրահասակ նոճիների  
Նրկայն - երկայն պատկերները:  
Նոճիները՝ խիստ բարկացած  
Խեղկատակի խաղերի վրայ,  
Ե՛լ աւելի շտկվում են,  
Իրանց հպարտ զլուխները  
Գուռզութեամբ բարձրացնում են  
Աշխատելով հայեացը ծգել  
Բլուների միւս կողմը...  
—

\*) Խրիմի լեռների շարքը.

Ե. ՄԱՀՑԵՍԵԱՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Սև, մռայլ ամպեր երկինքն են պատել.  
Եռ է զալիս ժովն, անչոփ կատաղում.  
Ծանր կոհակներն սարեր են դառել,  
իրար են անցնում, ցիր-ցան փշրփում:

Կոժում են նրանք ժայռը եղերքի,  
Փրփուրով ժածկում երեսը ժովի.  
Մռայլ է իշնում ողջ ժովին. վայրկեան.  
Նայիր տարերքին՝ փոթորիկն է այն...

Ա. Լ' Մ Է \*)

(Պօէմա)

I.

Շատ տարի առաջ, երբ որ տակաւին  
Խրիմի փարթամ, պերճ թերակղղին  
Թաթար տղզութեան ձեռքն էր գտնվում,  
Մի անտառախիտ լերան սառուսում,  
Որտեղ հարաւի բնութեան բացած  
Զբնաղ տեսքերից մարդ իսպառ զրաւուած  
Իսկի յագենալ չէր կարողանում  
Ալում անունով թաթար էր ապրում.  
Երջանիկ էր նա և զոհ իր կեանքից՝  
Աստուած չէր զբկել նրան ոչնչից.  
Երկերով ոսկի, արծաթ նա ունէր,  
Անհոշիւ անդեայ ու երամակները  
Ամեն հարեան նախանձում էր միշտ,  
Որ ապրում է նա բաւական, անվիշտ...

\*) Սիւժետը վերցրուած է ռուսերէնից:

II.

Բայց իր գանձերից անչափ աւելի  
Միրում էր Ալումն իրա նազելի  
Մատաղ ամուսնուն՝ չքնաղ Ալ' մէին.  
Նրա սեռորակ աչքերի միշին  
Անհուն կրակ կար: Քալում էր թեթև.  
Նազուկ էր իրանն ու վայելչածե,  
Եւ ինչպէս կարմիր ու պայծառ արև  
Շրթերի ժպիտն ամենքի դէմքին  
Մի լոյս էր սփռում: Եւ գիշերալին  
Պլալան ու վառ աստղերի նման  
Նրա սքանչելի երեսի վրան  
Փալ էին տալիս դոլդ դիւթիչ աչքեր.  
Եւ սիրա վայխալով անուշ ծայն ունէր:

III.

Ալումն էլ ուրիշ կին չէր կամենում.  
Եւ չէր գտնուի ամբողջ Խրիմում  
Մի ուրիշ սիրուն, զեղեցկագէմ կին,  
Որ նման լինէր չքնաղ Ալ' մէին:  
Եւ ով էր կարող Ալ' մէի նման  
Միրել թաթարին, փաղաքշել նրան  
Զերմ ու բոցավառ անսահման սիրով:  
Երբ տեղ էր զնումը Ալումը դործով,

Ալ' մէն օրերով նրան սպասում,  
Մերծ լերան մինչեւ զագալն էր ելնում  
Եւ սուր հայեացքով հեռուն էր նայում—  
Հաղիւ նշմարուող օծապտոյտ Ճամբին,  
Որտեղից պիտ գար իրա սիրելին:  
Եւ հէնց որ հեռուից տեսնում էր նրան,  
Վազում էր ուրախ նրա հանդիման,  
Կարմըրրած դէմքով բաց զիրկն էր ընկնում,  
Միրազեղ համրոյր դէմքին զրոշմում:  
Եւ տուն էր գառնում Ալումը կամաց  
Իր չահել կնոշ իրանը զրկած:  
Քառամանեակներ տալիս էր նրան  
Զանազան օղեր և ապարանչան,  
Իսկ նա գրանցից անչափ գոհ մնում,  
Ժապում էր ուրախ և ծափ էր զարնում:  
Գիշերն էլ նստած նոճի ծառի տակ,  
Երբ պարզ երկնքում լոզում էր լուսնակ,  
Լսում էր Ալումն իր կնոշ կողքին  
Նրա սիրաշունչ, անուշ մեղեղին:  
Եւ բարձր նոճին խորհում էր, խորհում.  
Ծովն էլ երկնախուալ լերանց սառորտում  
Հրաշալի բաներ պատմում էր անլուռ,  
Եւ հեռուն—հեռուն, ով գիտէ, թէ ուր՝  
Սոխակի անուշ երգերն օղի մէջ  
Շաղ էին տալիս իրանց ելեէչ:  
Իսկ ցընորասոյզ գիշերը պայծառ

Կողում էր հանդարտ, լողում անդադար  
Անեղը, անսահման տարածութիւնով՝  
Ասաղի ետևից աստղը կորցնելով...

IV.

Երկար ժամանակ անցաւ այն օրից,  
Երբ ճամբայ ընկաւ Ալումը տանից.  
Նրա եւ գալու օրն էլ անց կացաւ  
Բայց նա տակաւին չը վերադարձաւ:  
Ալ' մէն անհանդիսա լինել սկսաւ՝  
Նրա գալստեան երկար սպասելով.  
Էլ չէ հրապարվում նա ոչ մի բանով:  
Իզուր է ուրախ ժպտում պարզ արփին  
Զուր է շշնջում ստուերախիտ սօսին,  
Իզուր են անուշ բուրում ծաղիկներ,  
Զուր էլ քաղցրաձայն երդում սոխակներ:  
Ալումը չը կայ—Ալ' մէի համար  
Արևն էլ կարծես չէ փայլում պայծառ,  
Ծաղկունքն էլ անուշ չեն բուրում խսառ,  
Իսկ սոխակների քաղցր մեղեղին  
Հաղիւ թէ պատմէ իր լսողներին  
Նրա անհուն սէլն ու վիշտը խորին:  
Փոխուել է Ալ' մէն. նիհար ու տիսուր  
Օրերով մի տեղ նստում է նա լուռ,  
Աչքերը դէպի ճանապարհն ուղղած

Եւ փոքրիկ ծեռքերն անզօր վայր թողած:  
Էլ չէ երկում առաջուայ նման  
Նազիկ կարմրութիւնն այտերի վրան.  
Գլուխն անդադար կորանում է ցած,  
Եւ նուրբ թելերով ասեղնագործած  
Շքեղ շապկի տակ անհանդիսա կերպով  
Կուրծքն է բարձրանում, ներքուստ  
մաշուելով:

V.

Անցան մի բանի տաղտկալի օրեր,  
Ալումը գարծաւ. բայց մենակ չէր՝  
Իր հետ նա բերեց անչափ գեղեցիկ,  
Զարա անունով՝ մի թաթար աղջիկ:  
Գողցել էր նրան Միրզա—Կհմալից՝  
Մի անագործն, չար բռնակալից  
Եւ ընկերունի բերել Ալ' մէին:  
Ալ' մէն կեանք առաւ կարծես վերստին.  
Անխօս շրթունքներն ուրախ ժպտացին,  
Սփրթնած այտերն ալ-կարմրեցին  
Եւ զուարթ երգերն էլի հնչեցին.  
Իսկ մատադահաս իր ընկերունուն  
Առաջին օրից նա սիրեց անհուն:

V.I.

Եւ ինչպէս Ալ' մէն՝ սիրուն էր ջարան,  
Բարակ ու ճկուն՝ ճիշդ օձի նման.  
Գեղահիւս երկար ժամեր էր կրում,  
Որոնցով կանանց նախանձն էր շարժում:  
Սակայն նա ունէր աւելի մեծ զանձ,  
Որ խսպառ գերում, դիւթում էր մարդկանց,  
Բայց յուզում էր միշտ, խոռվում Ալ' մէն.  
Դա չընաշխարհիկ աչիկներն էին.  
Սև չէին նրանք. դորշ դոյն ունէին,  
Խոշոր էին խիստ և տարօրինակ.  
Երբ մի - մի անգամ երկար, սեռակ  
Եւ գեղատեսիլ թարթիչների տակ  
Նրանք կիսով չափ փակ էին լինում՝  
Հեղիկ էր նրանց հայեացքը թւում  
Եւ խաղաղ, հանդիսաւ. բայց արժէր միայն  
Նրանց բարձրանալ — և հէնց նոյն ժաման  
Բըռնկուում էին աչքերը հրով  
Եւ փայլում մի սուր, պողպատի փայլով:  
Երգելու շընորհը թէպէտե չ'ունէր,  
Բայց սահուն, թեթե պարել նա դիտեր  
Դափր բարձրացրած զլիխիկի վրան  
Եւ կորացնելով նրբակաղմ իրանն.  
Պարը զնալով արագ էր գարծնում  
Եւ էլ գեղեցիկ շարժումներ դորժում.

Իսկ խորհրդաւոր աչքերի միշին  
Կրակ էր վառվում և մարում կրկին...

V.II.

Ինչ -որ ուրախ չէ վերջին ժամանակ  
Միշտ զբւարթ Ալումն, ու իրա հոգեակ  
Զքնաղ Ալ' մէին առաջուայ նման  
Նա չէ համբուրում, փայփայում նրան.  
Վաղուց է արգէն իր հսկալ կրծքին  
Չէ սեղմում նրան սիրով, չերծագին...

VIII.

Դիշեր է խորին և շուրջն ամեն ինչ  
Քաղցր ու անդորրիկ վայելում է նինչ.  
Իր արծաթաղօծ շողըը լուսնկան  
Թափել է առաս աշխարհի վրան.  
Մութ - կապուատադոյն լստակ երկնքում  
Անթիւ նպճապան աստղեն են փայլում.  
Աննշան քամին անզօր հառաչեց  
Եւ քիչ էլ անցած ուժասպառ ննջեց:  
Մի հեռու տեղից լսվում են յայտնի  
Զիլ ճռճողներն անհոգ ճպուռնի:  
Եւ քնքշանալով անկուշտ ու անյադ  
Երկիրը գարնան համբուրների տակ՝

Զէ կարողանում քնել: Վարդերի  
 Եւ անուշահոս մոդնովիաների  
 Բուրմունքն է հոսում: Հսկայ սօսիներն  
 Կանդնած են անշարժ. իսկ միմովաներն  
 Մի բան են փափսում: Եւ հարաւային  
 Անդորր, սքանչելի գիշերուայ ժամին  
 Լսվում են յանկարծ մեզմիկ, կտմացուկ  
 Համբոյրի ծայներ, ծիժաղ ու շըռւկ.  
 Ալումն է այդում քնքուշ Զարալին  
 Փայփայում այս ուշ գիշերուայ ժամին.  
 «Ես սիրում եմ քեզ, սիրում անսահման.  
 Պատասխանիր ինձ, Զարա աննման՝  
 Յոժմար ես արգեօք իմը լինելու...  
 Իմ չքնաղ Զարա, ինչու լուս ես դու:  
 Վերջապէս ասա, սիրելի՞ չեմ քեզ:  
 Նալիր ինձ վրայ, չես գտնի ինձ պէս  
 Մի ուրիշ Ալում: Որտե՞ղ կը տեսնես  
 Աչքերիս նման սեռակ աչքեր,  
 Որտե՞ղ կը գտնես էլ խիտ գանգուրներ.  
 Իմ ուսերի պէս ով ունի ուսեր.  
 Էլ հարուստ ըղգեստ և Էլ սուր գանակ  
 Չես գտնի բնաւ, իմ անդին հոգեակ:  
 Ես չեմ վախենում իսկի ոչ որից,  
 Ամենքն էլ թագուն վախում են ինձնից:  
 Դէ՞հ, ասա մի խօսք, Զարա նազանի  
 Եւ ամենալն ինչ քոնը կը լինի»:

Նրա խօսքերից արբեցած Զարան  
 Այսպէս է ահա տալիս պատասխան.  
 «Ես սիրում եմ քեզ, Ալում իմ անդին.  
 Ոչ թէ քո շըել շորը թանգագին,  
 Ոչ թէ սուր հայեացքն այդ ու աչքերիդ,  
 Ոչ թէ գանգուրներն ալիք մազերիդ,  
 Ալ քո հսկայ ոյժն և սիրտդ անվախ  
 Սիրելի են ինձ: Սակայն դու, աւազ,  
 ինձ կին չես կարող առնել: Իմացիր՝  
 Խանդոս է Ալ' մէն և վրէժինդիր»:

Ա. Լ Ո Ւ Մ.

«Օ՛, զրա մասին մի՛ էլ մտածիր.  
 Ինչ է որ Ալ' մէն, Զարա թանգագին:  
 Ինձ ծօտ կը լինես նրա տիրուհին»:

Զ Ա. Ր Ա.

«Ոչ, քանի Ալ' մէն ողջ է տակաւին,  
 Զէ կարելի այդ իսկի՛, բնաւին:  
 Վախենում եմ ես նրանից. Թող ինձ,  
 Թող վերագառնամ կեմալին նորից»:

Եւ իրա փոքրիկ դլուխը Զարան  
 Դնելով քաջի բարձր ուսի վրան  
 Ճկուն իրանով սեղմուեց նրան:  
 Ալումի հայեացքն իսկոյն հուր թափեց

Եւ կրծքում ասես փոթորիկ փրթեց.  
Նա թափով առաւ լայն խանչալն ահեղ...  
Զարան ամեն ինչ հասկացաւ ազդադղ...

## IX.

Իսկ Ալումի կինն իր ննշարանում  
Կիսամերկ պառկած փետրալից մահնում,  
Քնած է չընազ փերիի նման:  
Գեղեցիկ ժամերն ալիքանման  
Կախուած են փարթամ, քսւելով գետնին:  
Քնքուշ է, հմայող աննման մարմինն.  
Սնշարժ են երկայն, սևուկ թարթիչներն  
Եւ շունչ առնելիս մարմարէ կրծքերն  
Հանդարտ բարձրանում և ցած են իջնում:  
Քունն անուշ է, խոր: Գուցէ երազում  
Նա Մուհամեդի զրբախտն է տեսնում:  
Աչ. հազիւ թէ այն լինի էլ շքեղ  
Իր ճոխ պարտէլից. հազիւ թէ այնտեղ  
Եւս երշանիկ, զոհ զդայ իրան,  
Քան այստեղ է նա, աշխարհիս վրան:

## X.

Քնած Ալ'մէի վրա կորացած՝  
Մանր է շունչ առնում Ալումը յուզուած:

Բայց ահա Ալ'մէն մի շարժում գործեց,  
Երեսը դէպի Ալումը դարձրեց  
Եւ կամաց «Ալում» շշնչած քնից:  
Թաթարը սաստիկ դողգողաց մէկից:  
Այլ ևս եթէ մի բուկէ անցնէր,  
Դանակն անկասկած իջած կը լինէր.  
Բայց այդ ժամանակ բաց դրան շէմքին  
Երեաց Զարան վրդովը դէմքին:  
Սհաւոր Ալումն իսկոյն հասկացաւ,  
Թէ նրա հայեացըն իրան ի'նչ ասաւ.  
Եւ յանկարծակի կատաղի թափով  
Դանակը դէպի վեր բարձրացնելով,  
Ցցեց Ալ'մէի հմայիչ կրծքին.  
Ալ'մէն խոխուաց—աւանդեց հոգին...

## XI.

Հիմա էլ Ալումն, առաջուայ նման՝  
Ոսկի ու արծաթ ունի բաւական.  
Ոչինչ պակաս չէ նրա հագուստից.  
Բայց զրկուել է նա քուն ու հանգստից:  
Լոել են իսպառ անուշիկ երգերն  
Եւ անզօրացել նրա քաշ ձեռքերն:  
Պերճ պարտէղներում ամենայն զիշեր,  
Մօտ կէս զիշերին երեսում է ստուեր,  
Ճերմակ սաւանում, դանակը ձեռքին.

Այդ վրեժ է ուղում Այմէի հողին  
 Եւ զուր փնդրոսում իրան սպանողին:  
 Սակայն շատ չ'անցած հաւերն են խօսում  
 Եւ ըստուերն իսկոյն աչքից չքանում  
 Սպառնալիքներ բարձր կարդալով  
 Եւ զարհուրելի անէծք թափելով...

## XII.

Այդ օրերից վեր մի դար է անցել.  
 Ալումն ու Զարան վաղուց են մեռել:  
 Հետքն անգամ չը կայ Ալումի պերճ տաճ  
 Եւ ոչ էլ նրա ողջ կարողութեան:  
 Սակայն սպանուածն, աւանդութիւնով,  
 Ամեն իրիկուն, ըստուերի կերպով,  
 Փնդրում է մինչ այդ դաժան սառիխն  
 Ահեղ անէծքներ թափելով պլխին:



## ՑԱՆԿ

	Էջ.
Արմեանսկը . . . . .	3
Բուքը . . . . .	5
Չատրդաղը . . . . .	6
Պերեկօպի պարանոցի վրայ . . . . .	8
Պերեկօպի դաշտերում . . . . .	9
Ծննդեան լոյսը . . . . .	11
Հէնէից («Որտե՞ղ պիտ' գտնեմ»)	12
Ամպեր . . . . .	13
Փոթորիկ . . . . .	14
Աւ ծովի ափին . . . . .	15
Գաղթականի երդը . . . . .	16
Շ. Բօղլէրից («Ի՞նչ է ձեզ երկինքն»)	17
Ծովն աշունքին . . . . .	19
Անփոյթ ճամբորդները . . . . .	20
Մանուկ հովիւր . . . . .	21
Հեռաւոր մտերիմներիս . . . . .	22
Բօղենշտեղից («Մի ժամանակ ես ուղեցի»)	23
«Ինչու ես դարձեալ» . . . . .	24
Էլէգիա . . . . .	25
Մեծ և Փոքը Մասիս . . . . .	26

Հեղնէից («Եւ դաշտ, և անտառ»)	27
Մալիսեան զիշերին	28
«Զորս ընկեր էինք»	29
«Ինչու երդիչը»	30
«Սշուղ, դու ազգիդ»	31
Մալզիրի ափին	32
Կարեկցութիւն	33
Ուղեցոլցներին	34
Մըեածադ	35
Նոր տարուայ էլեզիա	36
Կոյսն ու պատանին	37
Աղօթք	38
Մահը	39
Խրիմի յուշատերից	41
Հեղնէից («Թէ ինչպէս անզութ»)	42
Նուեր	43
Կաչալի հովտից. 1. Մարտի սկզբին	44
» » 2. Գարնան առաւօտ	46
Ե. Մահասեսեանի նկարի առաջ	48
Ալմէ (պօչմա)	49



Յ. ԴԱՒԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐՈՒԹԻՄԹԵԱՄԲ  
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ:

1. Մ. Գօրկիլ, Մակար Զուղբա,  
թարգմ. Սիմ. Բարիեանի . 10 կոպ.
2. Սիմ. Բարիեան, Բանաստեղծու-  
թիւններ . . . . . 20 »

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.



Դիմել հրատարակչին—Армянскъ (Таврич.  
губ.), Ивану Давидову և Կովկասի լոյտնի զրա-  
վաճառներին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0339283

- 22856